Արձանագրություն N 2

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից ՀԾԳՑ թիվ 1 էներգաբլոկի գազատուրբինի և շոգետուրբինի հիմքերի նստվածքների գեոդեզիական եղանակով չափման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմված «ԵՐՋԷԿ-ԳՀԾՁԲ 24/17» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Երևան 27.09.2017թ., ժ. 10:00-ին

Մասնակցում էին

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Գևորգյանը |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ս. Չիդեմյանը |
| | Ա. Վարդապետյանը |
| | Ա. Միրաքյանը |
| | Բ. Հարությունյանը |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ա. Պետրոսյանը |

***Նիստի օրակարգը***

1. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները:
2. Տվյալներ՝ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:
3. Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը:

***Հարց 1. Ընթացակարգին մասնակցելու նպատակով www.armeps.am համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով հայտ ներկայացրած մասնակցի անվանումը և հասցեն:***

| Հ/հ | Մասնակցի անվանում | հասցե |
|---|---|---|
| 1 | «Հիդրոգեոշին» ՍՊԸ | ք. Երևան, Արղության 3 |

***Հարց 2. Տվյալներ՝ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:***

2.1 Ուսումնասիրելով մասնակցի ներկայացրած հայտը՝ Հանձնաժողովը պարզեց, որ էլեկտրոնային հայտը կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան. Մասնավորապես հայտում ներառված փաստաթղթերի վրա տեսանելի չեն էլեկտրոնային թվային ստորագրությունները:

2.2 Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետը, որոշեց «Հիդրոգեոշին» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ հրավերով սահմանված պայմաններին ոչ համապատասխան կազմված լինելու հիմքով:

**Կողմ 5, դեմ 0**

***Հարց 3. Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը:***

Հաշվի առնելով սույն արձանագրության 2.2 կետը՝ Հանձնաժողովը որոշեց, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «ԵՐՋԷԿ-ԳՀԾՁԲ 24/17» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

**Կողմ 5, դեմ 0**

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Գևորգյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ս. Չիդեմյան |
| | Ա. Վարդապետյան |
| | Ա. Միրաքյան |
| | Բ. Հարությունյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ա. Պետրոսյան |